

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ ԿԱՊԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐՈՒՄ

ՍՎԵՏԼԱՆԱ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Հոգվածում համաժամանակյա քննության ենթ ենթարկել քերականական այն իրողությունները, որոնք հատկանշական են Կապանի տարածաշրջանի բարբառային միավորների ուսումնասիրման և տարբերակման համար: Այս տարածաշրջանի խոսվածքները մինչ այժմ ամբողջապես գիտական քննության չեն ենթարկվել:

Գևորգ Զահուկյանը զուգաբանական-վիճակագրական սկզբունքով V դարի հայ բարբառները դասակարգելիս հյուսիսարևելյան բարբառային խմբում առանձնացրել է Արցախ-Սյունիքի միջենթաբարբառ¹: Հարցի ուսումնասիրության տեսանկյունից կարևորվում է հատկապես Մելադա Աղաբեկյանի «Սյունիք-Արցախ տարածքի բարբառների պատմական հնչյունաբանություն»² հետազոտությունը, որում քննվել են նշված տարածքի բարբառային միավորների հնչյունական համակարգերը: Սակայն այս աշխատություններ չեն ներառվել խնդրո առարկա խոսվածքները:

Հայ բարբառների միահատկանիշ դասակարգման սկզբունքին հետևելով՝ Կապանի տարածաշրջանի 31 խոսվածքներից չորսը (Եղվարդ, Կաղնուտ, Ներքին Հանդ, Սրաշեն) դասել ենք **(Լհ)Ս**, իսկ մյուսները՝ **ՈՒՄ** ճյուղի մեջ, (Կապան, Արծվանիկ, Գեղի, Ծավ, Նորաշենիկ, Շիկահող և այլն): Աշխարհագրական տեղադրմամբ Կապանը գտնվում է **ՈՒՄ** (Ղարաբաղ, Գորիս) և **(Լհ)Ս** (Հադրութ, Մեղրի) ճյուղերի բարբառային գոտում, ուստի բնական է, որ «բարբառային ուժեղ միջավայրում այլ բարբառային ձևերը տեղի են տվել և տեղի են տալիս՝ մոտենալով շրջապատի ձևերին»³: Կապանի տարածաշրջանի խոսվածքները, «հանդիպելով ում ճյուղի Ղարաբաղի բարբառին, ուժեղ ազդեցության ենթարկվելով, կլանվել են նրանից՝ որոշ ձևափոխությամբ պահպանելով «ս» ճյուղի՝ Հադրութի որոշ հատկանիշներ»⁴:

Քննվող խոսվածքների մեծ մասում ներկայումս գործառում են **ՈՒՄ**

¹ Զահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972, էջ 186:

² Հայերենի բարբառագիտական առլաս, պրակ 3, Երևան, 2010, էջ 54-165:

³ Դավթյան Կ., Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզ, Երևան, 1966, էջ 230:

⁴ Նույն տեղում, էջ 235:

ճյուղին բնորոշ լեզվական իրողություններ: Այս տարածաշրջանի խոսվածքներում հոգնակիակերտ մասնիկները շատ չեն (**-էր, -նէր, -նի, -է(ր)ք/ ք , -իք, -ք, -ա/ ւն (ն)ք, -արանք, -օ/ օ տ, -ու/ ու տ/, -ու(ն)ք, -օտանք, -օտէ(ն)ք**): Համաժամանակյա կտրվածքում բառերի գերակշռող մասի հոգնակին կազմվում է **-էր** և **-նէր** մասնիկներով, ինչի հետևանքով էլ հիշյալ բարբառային միավորներում **-նի** հոգնակիակերտի գործառումը սահմանափակ է: Վերջինս դեռևս կիրառվում է Աղվանու, Դավիթ Բեկի, Տանձավերի և (**ԼԻ**)Ս ճյուղի խոսվածքներում, բայց երիտասարդների խոսքում սակավադեպ է, ինչպես՝ **անջուկ-նէր//ընջուկնի** (Դ.Բ., Աղ., Ս.), **մօկնէր//մօկուննէր//մօկնէք** (Դ.Բ., Աղ., Ս.)//**մըկնօտանք** և այլն:

Կապանի տարածաշրջանի խոսվածքները հոլովման համակարգում միմյանցից էականորեն չեն տարբերվում: Սակայն Աղվանում, Դավիթ Բեկում և Տանձավերում գոյականի **ի** հոլովման ժամանակ սեռականն ունենում է **ի** թեքույթ, իսկ մյուս խոսվածքներում՝ **է**: Սեռական հոլովը ստանում է **ն** որոշիչ հոդ, իսկ գործիական և ներգոյական հոլովները՝ **ը**, ինչպես՝ ուղղ. մէշկ(ը), սեռ./տր.մէշկէ(ն), հայց. մէշկ(ը), բաց. մէշկա(ն), գործ. մէշկավ(ը), ներգ. մէշկում(ը): Հարկ է նշել, որ բացառական, գործիական և ներգոյական հոլովները ձևավորվում են Սյունիք-Արցախ տարածքին բնորոշ երկու՝ համադրական (կցական) և հարադրական (վերլուծական) եղանակներով: Համադրական կազմության բացառականի իմաստն արտահայտվում է ուղղական, իսկ ներքին թեքման դեպքում՝ սեռական հոլովաձևին **ա(ն)/ ւն (ն)** հոլովակերտի կցմամբ (օր.՝ ծառան «ծառից», շանան «շնից»): Ինչպես Ղարաբաղի բարբառում, այնպես էլ հետազոտության առարկա խոսվածքներում «գոյականի բացառական հոլովի **ա/ւն** թեքույթը կարելի է համարել այդ տարածքին բնորոշ հատկանիշ»⁵: Արմատական **ա** ծայնավորով վերջավորվող որոշյալ առմամբ գոյականների բացառականը ձևով նման է ուղղականին: Այս դեպքում կարևորվում է շեշտի գործառույթը, որը բացառականի հոլովաձևերում ընկնում է ոչ թե վերջընթեր, այլ վերջին վանկի վրա⁶, օր.՝ էթ կօլաւն մի խըրէգ ճուր ածէ ծէրքիս: Բացառականի վերլուծական ձևը կազմվում է երկու՝ **անա** և **ն է/ըստա** բառ-մասնիկներով, որոնք ավելանում են սեռական հոլովաձևին, ընդ որում առաջինը կիրառվում է և՛ իրանիշ, և՛ անձնանիշ գոյականների դեպքում,

⁵ Միքայելյան Ժ., Գոյականի բացառական հոլովի կազմությունը հայերեն բարբառներում, Զահուկյանական ընթերցումներ -2007, Երևան, էջ 128:

⁶ Պողոսյան Ա., Հաղորդի բարբառը, Երևան, 1965, էջ 90:

սակայն իրանիշների հետ ունի ոճական նշանակություն, օր.⁷ Սարան ճանջերը քրշցրուլ ըն: Էթ սարէն անա (կամ սարան) էն դօլ մը ծ ծըմակ կա: Առաջին օրինակում սար բառը հարադրական կազմությամբ չի կարող գործածվել, իսկ երկրորդում բարբառային երկու ձևերն էլ թույլատրելի են: Անա մասնիկով և համադրական ձևով բացառականի գործածությունն ընդունելի է մարդ բառի և կենդանի նշանակող գոյականների կազմության համար (*մարթան կըման, մարթէն անա, կըվան, կըվէն անա*): Բայց անձ մատնանշող այլ գոյականներ նմանատիպ կիրառություն չունեն. նրանք արտահայտվում են միայն անա և նէ/ըստա մասնիկներով (*ախպուրը անա// նէ/ըստա*): Նէ/ըստա⁷-ն ընդհանրապես հատուկ է անձնանիշ գոյականներին: Այն սակավադեպ է Աղվանի, Դավիթ Բեկ և Տանձավեր խոսվածքներում: Իբրև անկախ բառ՝ այն արտահայտում է տարբեր իմաստներ, այսպես՝ կպչել իմաստը պահպանել է նէ/ըստա կէնալ և նէ/ըստա տալ հարադրություններում, օր.⁷ «Հի՞նչ ըս մօրըտ/թ նէ/ըստա կացա(լ)», «Յէկա պատան նէ/ըստա տօր»: Սեռական հոլովաձևի հետ այս բառ-մասնիկը, իբրև բացառական հոլով, ունի մասին, վերաբերյալ կապերի իմաստները, օր.⁷ Մըր հըրէվանէն նէ/ըստա շատ ըն խըսիս (Եղ.,Կղ.,Ն.Հ., Ս.), ինչպես և՛ վրայից (օր.⁷ Օջախէն նէ/ըստան դըզղանը յէր կալ): Գործիականը ձևավորվում է ա/ւն վ հոլովակերտով (օր.⁷ *իրէսալ, կէտալ*): Բացառություն են ծեռք և ոտք գոյականները, որոնք ունեն երկ-ձևություն՝ ծէքալ// ծէ/ըռուք և վըն (դ)ալ//վէ/ընուք (երկրորդ տարբերակներն առաջացել են գրաբարի հոգնակիից, սակայն այժմ իբրև այդպիսին չեն հասկացվում, օր.⁷ *Քու է/ըռուք «ծեռքով» տիրի ստըղ*): Ինչպես Ղարաբաղի և Հադրութի բարբառային միավորներում, անձնանիշ գոյականի վերլուծական կազմությամբ գործիականն արտահայտվում է սեռականի և անալ//ւն նւն վ կամ նէ/ըստալ մասնիկների հարադրությամբ, օր.⁷ *քըվեր նէ/ըստալ//քըվօրըն անալ* (Դ.Բ.,Աղ.,Տ.): Ներգոյական հոլովի վերլուծական տարբերակ-

⁷ Համամիտ լինելով Ա. Մ. Պողոսյանի հետ՝ կարծում ենք, որ նէ/ըստա բառ-մասնիկը տարաժամանակյա կտրվածքում պետք է առաջացած լինի գրաբարյան նիստ բառից և նախապես նշանակել է «ցածր կանգնել», ապա՝ «հպել, կպչել, միանալ», հետո բառիմաստի շրջմամբ՝ «պոկվել, անջատվել, հեռանալ»՝ ներկայացնելով արմատական բառի հենց բացառական հոլովաձևը՝ ուղղ. նիստ, բացառ. (ի) նըէտալ(յ) [**Պողոսյան Ա. Մ.**, Հադրութի բարբառը, Երևան, 1965, էջ 91-92]:

ները կազմվում են սեռական հոլովով և **մէջ//մաջ** կապով (վերջին տարբերակը առկա է միայն **(ԼԻ)Ս** ճյուղին պատկանող խոսվածքներում), նաև՝ **անա** և **նէ/ըստա** մասնիկների ներգոյական հոլովածներով (օր.[՝] *տան(ը) մէջի/էն/մաջին, մարթին անումը/նէ/ըստումը*): Հարկ է կարևորել, որ լեզվի զարգացմանը զուգընթաց հոլովական համակարգում ձևավորվել է միօրինակության և ընդհանրության ձգտում:

Խոսվածքային յուրահատկություններ են առկա նաև ածականի գերադրական աստիճանի վերլուծական ձևի կազմավորման ժամանակ: Այն արտահայտվում է **ամէն//ըմէն, սաղ, լօխ, չիմ** որոշյալ դերանունների բացառական հոլովածնով և ածականի հարադրությամբ: **ՈՒՄ** ճյուղի խոսվածքներում, բացառությամբ Աղվանու, Դավիթ Բեկի, Տանձավերի, գործառվում է **սաղ**-ը «ամեն, բոլոր» (օր.[՝] *ամէնան հաստ, սաղան կիծի*), **(ԼԻ)Ս** ճյուղի խոսվածքներում՝ նաև **լօխ**-ը (օր.[՝] *ընէնան օրախ, լօխան կուճուր, սաղան պէլ*), իսկ Աղ.-ում և Դ.Բ.-ում և Տ.-ում ավելանում է նաև **չիմ**-ը (օր.[՝] *լօխան լըղար, լօխճան մէծ, չիման թիթէվ*): Տարածաշրջանիս խոսվածքներում ընդհանրական բնույթ ունեն հատկանիշի սաստկական նշանակությամբ կիրառվող **շատ** և **լն փ** «բավական, չափազանց» բառերը, օր.[՝] *լն փ լն վ, շար կըռօ* և այլն:

Կապանի տարածաշրջանի բարբառային միավորների դերանվանական համակարգում դրսևորվող առանձնահատկությունները հիմնականում հնչյունային են, օր.[՝] տո՛ւ (Աղ., Դ.Բ., Տ.)//տու, մէք (Աղ., Դ.Բ., Տ.)// մը/քը (Շ., Ծ., Ն. Հ., Ս., Կղ., Եղ.)// մուք (մյուս խոսվածքներում): Խոսվածքների դերանվանական համակարգի քերականական զուգաբանություններից է ցուցականների թեք հոլովածներում և հոգնակի ուղղականում **տ** կամ **դ** հնչյունի հավելումը (օր.[՝] *ըստրն, ընդրն նն վ, ընդրն նք*): Խոսվածքներում գործառվող **էս, էթ/տ, էն** դերանունների թեք հոլովների զուգաձևությունները համարում են Ղարաբաղի և Հաղրուփի բարբառային միավորների ազդեցություն: Նշված դերանունների սեռական և տրական հոլովները **(ԼԻ)Ս** ճյուղի **Եղվարդ, Կաղնուտ, Ներքին Հանդ, Սրաշեն** խոսվածքներում ունեն նաև **ո՛ւ ստ ո՛ւ ր, ո՛ւ նդ ո՛ւ ր, ո՛ւ տ ո՛ւ ր** ձևերը, իսկ **ՈՒՄ** ճյուղի Դավիթ Բեկ, Աղվանի և Տանձավեր խոսվածքներում՝ **ըստ ո՛ւ ր, ընդ ո՛ւ ր, ըտ ո՛ւ ր**: Ինչպես Ղարաբաղի բարբառը, խնդրո առարկա խոսվածքները ևս ցուցական դերանունների երկու տիպերի (**սա, դա, նա** և **այս, այդ, այն**) խառնուրդ ներկայացնող բարբառային միավորների թվին են

պատկանում, քանի որ այս խոսվածքներում ևս **էս**, **էթ/տ**, **էն** ցուցականները թեք հոլովաձևերում **տ-ի** հավելման հետ ունեն նաև **րա** հնչյունախումբ⁸:

Հոլովման համակարգում խոսվածքներն ունեն ընդհանրություններ, իսկ խոնարհման համակարգում՝ մի շարք տարբերություններ: Ուսումնասիրության առարկա խոսվածքների խոնարհման հարացույցները հատկանշվում են քերականական մի շարք առանձնահատկություններով, որոնք ընդհանրապես բնորոշ են **ՌԽՄ** և **(ԼԻ)Ս** ճյուղերի բարբառային միավորներին: Դեռևս գրաբարում ներկա անկատարն ունեցել է ըղձական իմաստով կիրառություններ, իսկ միջին հայերենում այդ ժամանակաձևերը դարձան ըղձականի ապառնիի ձևեր⁹: Արևելյան խմբակցության բարբառներում, նաև քննվող խոսվածքներում, ապառնի ժամանակի «եղանակային տարբերությունները դրսևորվում են **կ** և **պիտի** եղանակիչների միջոցով, իսկ ապառնիության իմաստը՝ ապառնի դերբայի և ըղձական եղանակի բայաձևերով»¹⁰: Ապառնի դերբայը գործածվում է երկու վերջավորությամբ՝ **-ու/ո՛ւ** և **-ական// – անկան**, որոնք ավելանում են անորոշ դերբային, ընդ որում առաջինը հատուկ է խնդրո առարկա տարածքի **ՌԽՄ** ճյուղի, իսկ երկրորդը՝ **(ԼԻ)Ս** ճյուղի բարբառային միավորներին, օր.՝ նըստելու, բայց՝ նըստըլական, ա/ըսելու/ըսըլական (Ն.Հ., Ս., Կղ., Եղ.): Որպես ձևաբայ՝ ապառնի-ապակատարը մասնակցում է սահմանական եղանակի ապառնի և անցյալ ապառնի ժամանակաձևերի կազմությանը, օր.՝ տանելու վըմ//եմ, աղալու վըք լիմ (i), ըղըլական իթ/ք (Ն.Հ., Ս., Կղ., Եղ.): Ինչպես արդի հայերենում և Ղարաբաղի բարբառում, այնպես և այս տարածաշրջանի խոսվածքներում ըղձական եղանակի ապառնին ծագում է գրաբարյան ներկայից (օր.՝ *կիրի*, *կիրին*): Ենթադրական և հարկադրական եղանակների ապառնի ժամանակաձևերը կազմությամբ ևս նման են արդի գրական լեզվին: Ենթադրական եղանակը ձևավորվում է ըղձական եղանակից՝ **կ** եղանակիչով, իսկ հարկադրականը՝ **պի/ըտի//բի/էդի//բէդմա** բառմասնիկով: **Պի/ըտի** եղանականիշ մասնիկը հատուկ է քննվող բարբառային գոտու **ՌԽՄ** ճյուղի, իսկ մյուս տարբերակները՝ **(ԼԻ)Ս** ճյուղի խոսվածքներին (*կըրվամ*, *բի/էդի կըտրապիմ*): Ի դեպ, տեղին է նշել, որ, ըստ անցյալ

⁸ Կատվալյան Վ., Հայ բարբառագիտության հարցեր, Երևան, 2014, էջ 67-68:

⁹ Անթոսյան Ս., Խոնարհման համակարգի զարգացման ընթացքը, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. II, Երևան, 1975, էջ 324-325:

¹⁰ Գևորգյան Գ., Ապառնիի իմաստային դրսևորումները հայերենի տարածական տարբերակներում, Զահուկյանական ընթերցումներ, Երևան, 2006, էջ 54:

Ժամանակաձևերի, Կապանի տարածաշրջանի խոսվածքները կարելի է տարբերակել: ՈՒՄ ճյուղի գրեթե բոլոր խոսվածքները, բացառությամբ Դ. Բ.-ի, Աղ.-ու, Տ.-ի, չունեն օժանդակ բայի անցյալի խոնարհման առանձին ձևեր և այդ ժամանակային իմաստն արտահայտում են լին (լ) բառ-մասնիկի ու ներկա ժամանակաձևերի հարադրությամբ, օր.՝ կնրռնում լին «գրում էի», կնրռնւմ վրմ լին «գրելու էի», կիրնծրմ լին «գրել էի»: Այս խոսվածքներում բացակայում են անցյալ կատարյալի համադրական ձևը և անցյալ վաղակատարը, ընդ որում վաղակատար ժամանակաձևերի իմաստն արտահայտում են նաև հարակատարով: Ըղծականի անցյալի ապառնին (ԼԻ)Ս ճյուղի բարբառային միավորներում, նաև Աղվանու, Դավիթ Բեկի, Տանձավերի, Ծավի, Շիկահողի, Շիշկերտի և Ճակատենի խոսվածքներում կազմությամբ ևս սերում է գրաբարի անցյալ անկատարից (ըշխադի-ըշխադիք): Այս խոսվածքներում գործառում են նաև ենթադրական և հարկադրական եղանակների անցյալի համապատասխան ձևերը (կըսըվէրիք, պի/էպի ըսէր (Դ. Բ., Աղ., Տ.), բի/էդի ըրվին (Ն.Հ., Ս., Կղ., Եղ.): Սակայն ՈՒՄ ճյուղի բարբառային մյուս միավորներում ըղծականի և ենթադրականի անցյալ ժամանակաձևերն առանձին ձևեր չունեն. դրանք նույնանում են սահմանական եղանակի անցյալ ապակատարին (օր.՝ կիրէլու վ/յրմ լին (լ) «գրելու էի, գրեի, կգրեի»), ուստի նշված ժամանակաձևերը միայն խոսքաշղթայում են իմաստով տարբերվում. այսպես՝ Թւմ վրը ու րւն տըսնալու վրմ լին (լ), ըսէլու վ/յրմ լին (լ) «եթե նրան տեսնեի, կասեի», Տըսնաս մըզ հըսնէլու վ/յրն լին (լ), վրը դըղ կադնէլու վ/յրք լին (լ) «Արդյոք մեզ հասնելու էին, եթե այնտեղ կանգնեինք»: ՈՒՄ ճյուղի բարբառային այս միավորներում հարկադրականի անցյալը ձևավորվում է պի/ըպի եղանակիչ + անցյալ ապակատար քերականական կաղապարով (պի/ըպի լըսէլու վ/յրն լին (լ), իսկ բարբառային քննվող գոտում հարկադրանքը կամ պարտադրանքն ընդգծելու նպատակով հաճախ կիրառում են պըպկա//պըթ ա եղանակիչը (պըպկ ա//պըթ ա կիրիմ): Քննվող խոսվածքների ժխտական խոնարհման հարացույցում եղանակաժամանակային տարբեր ձևերի համար կիրառում են չ կամ ոչ ժխտական մասնիկները: Սահմանական եղանակի ժամանակ գործածվող չ մասնիկը դրվում է օժանդակ բայի վրա, բացառություն է միայն անցյալ կատարյալի պարզ ձևը, որն առկա է (ԼԻ)Ս ճյուղի բարբառային միավորներում և Աղվանու, Դավիթ Բեկի, Տանձավերի խոսվածքներում: Անցյալ կատարյալի ժխտումը կատարում են հե-

տադաս **վէշ/վըշ** բառ-մասնիկով, այսպես՝ կիրան չըմ/կիրեցէ վէշ/վըշ(անց. կատ.), կո՛ւրո՛ւ լո՛ւ/կիրիլան կան չըմ (ապառնի), կո՛ւրո՛ւ լո՛ւ/կիրիլան կան չըմ լիան (լ), նաև՝ կիրիլան կան չի (անց. ապառնի), կիրան ծ չըմ (հար.-վաղ.), կիրան ծ չըմ լիան (լ) (անց. հար.-վաղ.), **(ԼԻ)Ս** ճյուղի խոսվածքներում նաև՝ կիրան ծ չի(անց. հար.), կիրան լ չի (անց. վաղ.): **Չ** մասնիկը մասնակցում է նաև ենթադրական (պայմանական) եղանակի ապառնի և անցյալ ապառնի ձևերի ժխտական խոնարհմանը, երբ գործառվում է անորոշ դերբայը, իսկ ժխտական մասնիկն ավելանում է դերբային հաջորդող օժանդակ բային, ինչպես՝ մընալ չըմ(ապ.), մընալ չըմ լիան (լ), նաև՝ մընալ չի (անց. ապ.). անցյալ ապառնիի երկրորդ ձևն առկա է մասնավորապես **(ԼԻ)Ս** ճյուղի խոսվածքներում: Ըղծական և հարկադրական եղանակների ժամանակաձևերի ժխտումը տեղի է ունենում բայաձևիկն հետադաս **վէշ(Աղ.,Դ.Բ.,Տ.)//վըշ (Եղ.,Կղ.,Ս., Ն.Հ.) //վէ/ըշ (Արծ.,Կպ., Շ.,Ծ., Ագ., Խղ.,Շշ.,Լ.,Ուժ.)** բառ-մասնիկով, այսպես՝ մընամ վէշ //վէ/ըշ/վըշ (ըղծ. ապ.), մընալու չըմ լիան (լ), մընի վէշ/վըշ (ըղծ. անց. ապ.), պի/ըտի մընամ վէշ/վէ/ըշ, բէ/իդի մընամ վըշ(հարկ. ապ.), պի/ըտի մընալու չըմ լիան (լ), բէ/իդի մընի վէշ/վըշ (հարկ. անց. ապ.): Նկատելի է, որ ժխտական խոնարհման հարացույցում համադրական ժամանակաձևերը ևս արտահայտվում են հարադրությամբ: Խոսվածքների համար տարբերակիչ է նաև արգելական հրամայականի **մի** մասնիկը: **Մի, միք** մասնիկները գործածական են Գորիսի խոսվածքի ազդեցությունն ունեցող խոսվածքներում (*կիրի՛ մի-կիրի՛ միք*), իսկ **մէ, մէք** տարբերակները՝ **(ԼԻ)Ս** ճյուղի լեզվական մնացորդները պահպանած բարբառային միավորներում (*ասէ՛ մէ-ասէ՛ մէք*): **Մա, մաք** մասնիկներն առհասարակ հատուկ են Կապանի **ՈԽՍ** ճյուղի խոսվածքներին (*կէնա՛ մա – կէնա՛ մաք*), բայց Ծավում և Շիկահողում կիրառվում են այդ մասնիկների հնչյունական տարբերակները՝ **ման,մանք (օտի ման , քինի ման ք)**:

Տարածաշրջանիս բարբառային միավորներում, ինչպես և Ղարաբաղի բարբառի խոսվածքներում, տարածում ունեցող երկրորդական բաղադրյալ ժամանակները ձևավորվում են անկատար, ապառնի ու հարակատար դերբայներով և **լինել** բայի խոնարհված ձևերով¹¹, ընդ որում **ՈԽՍ** ճյուղի խոսվածքներում իբրև այդպիսիք հանդես են գալիս **նո՛ւ մ** և **լիան (հիլան**

¹¹ **Միքայելյան Ժ.**, Բայի երկրորդական ժամանակները Ղարաբաղի բարբառում, Հայոց լեզվի պատմության հարցեր, Ստեփանակերտ, 2008, էջ 49:

(ՂԻՔ., Գոր.) բառ-մասնիկները, իսկ (ԼԻ)Ս ճյուղի խոսվածքներում՝ նիս-ը և լիւ (յ)-ը: Երկրորդական բաղադրյալ ժամանակաձևեր են ձևավորվում նաև հարակատար դերբայով և կամ պակասավոր բայով (*լրսած կամ, խըսէցած կաք*): Ընդհանրապես հարակատար դերբայով կազմված հիմնական և երկրորդական ժամանակաձևերն իրենց կիրառական ակտիվությամբ առանձնանում են մյուս ձևերից: Հավելենք, որ ՈՒՄ ճյուղի այն խոսվածքներում, որոնցում չեն գործածվում օժանդակ բայի անցյալի խոնարհաձևերը, **ձևաբայ+օ-ժանդակ բայի ներկա խոնարհաձև+լիւ (յ)** քերականական կաղապարով կազմված ժամանակաձևերը համարվում են ոչ թե երկրորդական բաղադրյալ, այլ գլխավոր: Քերականական այս փոխարինմամբ էլ «պետք է բացատրել այս երկու տիպի ժամանակաձևերի հակադրության բացակայությունը»¹² խնդրո առարկա ենթախոսվածքներում: Ինչպես Ղարաբաղի խոսվածքներում, Կապանի տարածաշրջանի ՈՒՄ ճյուղի բարբառային միավորներում ևս, բացի Դավիթ Բեկից, Աղվանուց, Տանձավերից, **ձևաբայ+օժանդակ բայի ներկա խոնարհաձև+լիւ (յ)** քերականական կաղապարով ժամանակաձևերը կարող են լինել բազմիմաստ¹³, օր.՝ կաղնած ըմ լիւլ «կանգնել էի, կանգնած էի», նաև՝ «կանգնած եմ եղել» (ԼԻ)Ս ճյուղի խոսվածքներում, կամ՝ տըսնալու վըս լիւլ «տեսնելու էիր, տեսնեիր, կտեսնեիր»: Խոսվածքներում ընդհանրապես անցյալ ժամանակաձևերի իմաստն արտահայտվում է համադրական և վերլուծական կազմությամբ. համադրական կառույցներում՝ անցյալի դիմաթվային ցուցիչներով, իսկ հարադրական կազմություններում՝ օժանդակ բայի անցյալի պարզ և բաղադրյալ խոնարհաձևերով:

Այսպիսով, ներքին զուգադրական մեթոդով Կապանի տարածաշրջանի բարբառային միավորները քննելիս անհրաժեշտ է նշել, որ քերականական իրողությունների տարբերակիչ հատկանիշներից անվանականներն ընդհանրապես զիջում են բայականներին: Կապանի տարածաշրջանի (ԼԻ)Ս ճյուղի խոսվածքներն ունեն եղանակային բոլոր ժամանակաձևերը, իսկ ՈՒՄ ճյուղի խոսվածքներն անցյալ ժամանակաձևերի կազմության դեպքում բաժանվում են երկու խմբի: Արդի ժամանակափուլում զգալի է ՈՒՄ ճյուղի խոսվածքների ազդեցությունը: Բարբառայնությունը հիմնականում պահպանել են տարեց և

¹² Միքայելյան Ժ., Բայի երկրորդական բաղադրյալ ժամանակները Խոյ-Մարաղայի բարբառի խոսվածքներում, Զառուկյանական ընթերցումներ, Երևան, 2011, էջ 224:

¹³ Միքայելյան Ժ., նշվ. աշխ., 2008, էջ 51:

միջին սերնդի բարբառախոսները, իսկ երիտասարդների խոսքը, պայմանավորված հասարակական և ժամանակային փոփոխություններով, հագեցած է արդիիայերենյան իրողություններով:

ԱՄՓՈՓՈՒՄ

Արդի ժամանակափուլում Կապանի տարածաշրջանի խոսվածքների հետազոտման և դասակարգման համար էական են քերականական այն իրողությունները, որոնք բնորոշ են տվյալ բարբառային միավորին: Քննվող հարցի տեսանկյունից կարևորվում են խոսվածքների անվանական և բայական ենթահամակարգերում առկա յուրահատկությունները: Հոդվածում իբրև այդպիսիք դիտարկել ենք հոգնակիակերտ մասնիկների գործածությունը, գոյականի և դերանունների հոլովման համակարգերի, սահմանական եղանակի ներկա և անցյալ ժամանակաձևերի, ըղծական և ենթադրական անցյալ ժամանակաձևերի առանձնահատկությունները, ինչպես և երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերը, **պիտի** բառ-մասնիկի և **մի** արգելականի տարբերակները:

Բանալի բառեր - բարբառային միավորներ, խոսվածքներ, քերականական իրողություններ, տարբերակներ, գործածել, ընդհանրություն, համակարգ:

ПРОЯВЛЕНИЕ РЯДА ГРАММАТИЧЕСКИХ РЕАЛИЙ В ДИАЛЕКТНЫХ ЕДИНИЦАХ КАПАНСКОГО РЕГИОНА

СВЕТЛАНА МАНУЧАРЯН

На современном этапе для исследования и классификации говоров Капанского региона существенны те грамматические реалии, которые характерны для данной диалектной единицы. С точки зрения исследуемого вопроса выделяются особенности, существующие в именных и глагольных подсистемах говоров. В статье в качестве таковых мы рассмотрели особенности применения производных частиц образования множественного числа, системы склонения существительных и местоимений, категории настоящего и прошедшего времени сослагательного наклонения, желательного и предполагаемого наклонения прошедшего времени, а также второстепенные составные временны́е формы, варианты частицы „**պիտի**” (**должен**) и выражающей запрет частицы „**մի**” (**не**).

Ключевые слова - диалектные единицы, говоры, грамматические реалии, варианты, употребить, общность, система.

PERFORMANCE OF SOME GRAMMATICAL ACTUALITIES IN THE DIALECTAL UNITS OF KAPAN REGION

SVETLANA MANUCHARYAN

At present the grammatical actualities typical of the dialectal units of Kapan Region, are essential to the studies and classification of the dialects of this region. From the point of view of the question under study, it is important to take into account the existing peculiarities in noun and verb subsystems of these dialects.

In this article Manucharyan considers the utilization of affixes to form the plural of nouns, the case systems of pronouns and nouns, the present and past indefinite tenses, the features of the subjunctive and conditional Moods, as well as secondary complex tenses, the variants of the modal verb piti (must) and the negative particle mi (don't).

Key words - dialectal units, idioms, grammatical actualities, variants, use, universality, system.